Հաշվետվություն

2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի կատարած աշխատանքների վերաբերյալ

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժինը 2017թ. ընթացքում ապահովել է իր մասով Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը, ինչպես նաև օրենսդրության կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանում ստեղծված է զորահավաքային մարմին, մշակված են զորահավաքային և մարզի խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները: Մարզային ենթակայության հիմնարկներում և տեղական ինքնակառավարման մարմինների հետ համատեղ, զորահավաքային պլաններով նախատեսված միջոցառումները և զորահավաքային նախապատրաստության շրջանակներում զորահավաքային միջոցառումների ժամանակ ռեսուրսների ծանուցումը ու զինկոմիսարիատների նախնական հավաքակետեր առաքումը իրականացվել է ամբողջությամբ:

2017 թվականին ՀՀ Արագածոտնի տարածքային զինկոմիսարիատների կողմից անց են կացվել զորահավաքներ, որոնք ընթացել են զորահավաքային պլանի համաձայն: Ռեսուրսների ծանուցմանը և նախնական հավաքակետեր առաքումն իրականացնելուն ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն: Զորահավաքային առաջադրանքները երեք զինկոմիսարիատների կողմից կատարվել են 94%-ով: 2016 թվականի ձմեռային զորակոչի առաջադրանքը մարզում կատարվել է 91,5%-ով, 2017 թվականի ամառային զորակոչի առաջադրանքը՝ 95,8%-ով: ՀՀ Արագածոտնի մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժինը զորակոչի և զորահավաքային նախապատրաստության գործառույթների շրջանակներում սերտորեն համագործակցել է մարզի տարածքային զինվորական կոմիսարիատների հետ:

ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից անհրաժեշտ աջակցություն է ցուցաբերվել զինված ուժերի զորահավաքային ծավալմանն ու պարտադիր զինվորական ծառայության զորակոչի իրականացմանը, ինչպես նաև ապահովվել է մարզային ենթակայության հիմնարկների և մարզի տեղական

ինքնակառավարման մարմինների մասնակցությունը զորահավաքային միջոցառումներին: 2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանի կողմից անհրաժեշտ աշխատանքներ են տարվել մարզում պաշտպանության բնագավառում ՀՀ օրենքների կատարումն ապահովելու ուղղությամբ:

Համայնքներում զորահավաքային միջոցառումների նախապատրաստման, կազմակերպման և ապահովման նպատակով մարզի համայնքներին ցուցաբերվել է անհրաժեշտ աջակցություն, մշակվել են համայնքների ղեկավարների որոշումների օրինակելի ձևեր:

2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզպետարանում մարզպետի ղեկավարությամբ տեղի է ունեցել երեք ուսումնաշտաբային վարժանք՝ ՀՀ պաշտպանության նախարարության գլխավոր շտաբի ռազմավարական պլանավորման վարչության աշխատակիցների հետ համատեղ: Վերջիններիս ժամանակ գործողության մեջ են դրվել ՀՀ Արագածոտնի մարզի զորահավաքային և խաղաղից պատերազմական ժամանակաշրջանի փոխադրման պլանները:

ՀՀ Արագածոտնի մարզպետի մշտական ուշադրության կենտրոնում են գտնվել Արցախյան ազատամարտի մասնակիցների, զինծառայողների, պահեստազոր արձակված անձանց, մարտական հերթապահության ժամանակ վիրավորումներ ստացածների և ընտանիքների անդամների սոցիալական, իրավական պաշտպանվածության հարցերը: Մարզի՝ զինծառայության ընթացքում զոհված (մահացած) զինծառայողների ընտանիքներին, արցախյան ազատամարտի առաջին խմբի հաշմանդամներին 2017 թվականի ընթացքում բազմիցս տրամադրվել են դրամական միանվագ աջակցություններ:

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 10-ի թիվ 1016-Ն որոշման պահանջների՝ պաշտպանության նախարարության և սոցիալական ապահովության բաժնի հետ համատեղ քննարկվել, վերանայվել և թարմացվել են զոհված (մահացած) զինծառայողների անօթևան ընտանիքների և առաջին խմբի հաշմանդամների՝ բնակարանային ապահովման խնդիրներ ունեցող ընտանիքների ցուցակները: 2017 թվականի ընթացքում ՀՀ Արագածոտնի մարզից 9 ընտանիքների ՀՀ ՊՆ-ի կողմից հատկացվել են բնակարան ձեռք բերելու հավաստագրեր՝ 28.568.000 դրամի չափով:

Մարզի տարածքում գործող երեք զինկոմիսարիատներից վերցվել են Արցախյան պատերազմին մասնակցած, զոհված կամ վիրավոր սոցիալապես անապահով ընտանիքների ցուցակները և հետևողական կերպով ամբողջ տարվա ընթացքում նրանց տրամադրվել են դրամական աջակցություններ:

ՀՀ Արագածոտնի մարզպետի կողմից հաստատվել են ուսումնական հաստատությունների զինղեկների հետ եռօրյա ուսումնամեթոդական պարապմունքների անցկացման, 2017-2018թթ. ուսումնական տարվա ընթացքում ուսումնական հաստատությունների ռազմահայրենասիրական դաստիարակության կազմակերպման, զինվորական կոմիսարիատներում կցագրված 2001 թվականին ծնված պատանիների զինվորական ծառայության նախապատրաստման հիմնական միջոցառումների աշխատանքային պլանները:

2017 թվականին կցագրման ենթակա 951 նախազորակոչային տարիքի զինապարտներից կցագրվել են 757-ը կամ 79,6%-ը:

Մարզի տարածքից ռազմաուսումնական հաստատությունների համար 2017 թվականին զինվորական կոմիսարիատների կողմից առաջադրված 29 դիմորդ-թեկնածուներից ընդունվել են 15-ը կամ 51.7%-ը:

<<Ես եմ>> ծրագրով մարզի տարածքի զինկոմիսարիատներ դիմել է 14 զինակոչիկ:

ՀՀ Արագածոտնի մարզի կազմակերպություններում այլընտրանքային աշխատանքային ծառայության է անցել 1 քաղաքացի, որի ծառայությունը կազմակերպելու և վերահսկելու ուղղությամբ ձեռնարկվել են անհրաժեշտ միջոցներ:

2017 թվականի ձմեռային զորակոչը պատշաճ մակարդակով անցկացնելու և զորակոչային առաջադրանքները կատարելու ուղղությամբ տարվել են անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ: Հաշվի առնելով այն, որ ձմեռային զորակոչը անցկացվելու է տարվա ցուրտ և ձյունառատ ժամանակահատվածում, մարզի համայնքների ղեկավարներին 2017 թվականի դեկտեմբերին կայացած մարզխորհրդի նիստում առաջարկվել է զորակոչի անցկացման ընթացքում զինվորական կոմիսարիատներին ցուցաբերել համապատասխան աջակցություն: Զորակոչից խուսափողների և նրանց հարազատների շրջանում տանել անհրաժեշտ բացատրական աշխատանքներ:

Մշտական աշխատանքներ են տարվել պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների և ուսումնական հաստատությունների պաշտոնատար անձանց շրջանում, որպեսզի ժամանակին և սահմանված ձևով վարեն զինապարտների գրանցամատյանները, զինվորական հաշվառման ենթակա անձանց ցուցակները ներկայացնեն նրանց հաշվառման վայրի զինվորական կոմիսարիատներ:

Արտակարգ իրավիճակների բնագավառում կատարված աշխատանքները

Մարզպետը հանդիսանում է մարզի քաղաքացիական պաշտպանության պետը եւ պատասխանատվություն է կրում մարզի քաղաքացիական պաշտպանության համակարգի պատրաստականության համար:

Օրենսդրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում մարզպետը կազմակերպում եւ համակարգում է մարզի տարածքում համապատասխան մարզային ծրագրերով նախատեսված արտակարգ իրավիճակների հետեւանքների վերացման, տարերային եւ տեխնոլոգիական աղետների կանխման, վտանգի նվազեցման եւ հետեւանքների վերացման ուղղությամբ աշխատանքները, մասնակցում է հանրապետական համապատասխան ծրագրերով նախատեսված, ինչպես նաեւ օպերատիվ բնույթի միջոցառումների իրականացմանը:

Արտակարգ իրավիճակների բնագավառում ՀՀ Արագածոտնի մարզպետը ապահովել է Հայաստանի Հանրապետության օրենքների, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերի, կարգադրությունների, ՀՀ կառավարության և վարչապետի որոշումների և այլ նորմատիվ իրավական ակտերի կատարումը:

ՀՀ մարզպետարանի զորահավաքային նախապատրաստության բաժինը սերտորեն համագործակցել է ՀՀ ԱԻՆ Արագածոտնի մարզային փրկարարական վարչության հետ: Մասնավորապես՝ աշխատանքներ են տարվել մարզի համայնքներում աղետների ռիսկի կառավարման պլաններ մշակելու ուղղությամբ, համատեղ իրականացվել են հանրապետական և մարզային պլաններով նախատեսված մի շարք միջոցառումներ՝ կապված աղետների ռիսկերի նվազեցման և քաղաքացիական պաշտպանության հետ:

ՀՀ Արագածոտնի մարզում 2017 թվականի հունիսի 27-30-ը իրականացվել են մարզի ՔՊ վիճակի համալիր գնահատում և ցուցադրական ուսումնավարժանք: Ըստ վարժանքի ընթացքում արձանագրված պատրաստվածության մակարդակի՝ ՀՀ Արագածոտնի մարզը <<Քաղաքացիական պաշտպանության խնդիրների կատարմանը պատրաստ է>>:

2017 թվականի հուլիսի 27-ին ներկայացվել է <<ՀՀ Արագածոտնի մարզի քաղաքացիական պաշտպանության վիճակի համալիր գնահատման արդյունքների վերաբերյալ ակտը>>: Կազմվել է պլան-

ժամանակացույց, ըստ որի իրականացվել են աշխատանքներ՝ ի հայտ եկած թերությունները վերացնելու ուղղությամբ:

Ամբողջ տարվա ընթացքում նախատեսված պլանով կազմվել է գրաֆիկ, և վարչական հսկողություն է իրականացվել մարզի 35 համայնքներում՝ կապված քաղաքացիական պաշտպանության պլանների և դրանց առնչվող այլ փաստաթղթերի հետ: